

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

**05.03.2012թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը, Վ. Դավթյանը, Գ.Գևորգյանը, Յու. Պողոսյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնի պետ Ն. Մուշեղյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը:

### **Նիստում լսվեց հետևյալ հարցը.**

1. «2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

*/Ջեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

### **Որոշվեց՝**

Հաստատել 2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

*/Անհատական/*

**02.04.2012թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Յու.Պողոսյանը, Գ.Գևորգյանը, Ա. Աղազարյանը, Վ. Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Զ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետներ Մ. Երիցյանը և Գ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Օրոյանցը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Կ.Անտոնյանը:

**Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանազերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

**Որոշվեց՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանյան գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004-2010 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

2. «Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

**Որոշվեց՝**

Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

**3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

3.1. Հաղորդում՝ Իտալիայի Հոուն քաղաքում 2012 թվականի փետրվարի 20-ից 21-ը «Գյուղատնտեսության վիճակագրություն՝ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի գյուղական բնակավայրերի կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական վիճակի գնահատման համար» խորագրով ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ)/Գյուղատնտեսության Եվրոպական հանձնաժողովի «Կնոջ և ընտանիքի դերը գյուղական բնակավայրերի զարգացման գործում» աշխատանքային խմբի 22-րդ փորձագիտական հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ. Պետրոսյան/*

3.2. Հաղորդում՝ Թուրքիայի Անկարա քաղաքում 2012 թվականի փետրվարի 20-ից 23-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Սեզոնային տատանումների ճշգրտում» թեմայով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Վ.Օթոյանցև, Կ.Անտոնյան/*

3.3. Հաղորդում՝ Վրաստանի Թբիլիսի քաղաքում 2012 թվականի փետրվարի 20-ից 24-ը «2011թ. ցուցանիշներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում, համապատասխան 2011-2013թ.թ. համար աշխատանքների կատարման ժամանակացույցի, 2011թ. երրորդ եռամսյակի գնային դիտարկումների արդյունքներով սպառողական ապրանք-ծառայությունների գների երկկողմանի համադրումների աշխատանքների իրականացման և ներդրումային ապրանքների, շինարարության

բաղադրատարրերի դիտարկման համար ապրանք-ներկայացուցիչների ընտրանքի, դրանց քննարկման և համաձայնեցման նպատակով կազմակերպված երկկողմանի աշխատանքային քննարկմանը» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ. Մարտիրոսյան, Մ. Երիցյան, Գ. Պեպրոսյան/*

3.4. Հաղորդում՝ ԱՄՆ Նյու Յորք քաղաքում 2012 թվականի փետրվարի 28-ից մարտի 2-ը «ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 43-րդ նստաշրջանին» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/*

3.5. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2012 թվականի մարտի 12-ից 15-ը «ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Գենդերային վիճակագրություն խորագրով աշխատանքային հանդիպմանը» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ. Գևորգյան, Լ. Պեպրոսյան/*

### **Որոշվեց՝**

Արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունելի գիտություն:

*/Անհատական/*

### **10.04.2012թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա. Աղազարյանը, Վ. Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը:

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի խորհրդական Զ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը:

**Նիսպում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազայի «ԲԱԺԻՆ Դ. Զբաղվածություն» հատվածը ԱՄԿ գլխավոր գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

**Որոշվեց՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ ԱՄԿ գլխավոր գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2011 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազայի «ԲԱԺԻՆ Դ. Զբաղվածություն» հատվածը՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/*

**Որոշվեց՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 110-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

1. որոշմամբ հաստատված հավելված 1-ի

1) 13-րդ կետի դ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում Ծառայության աշխատակազմի ղեկավարին, նշանակումներ է կատարում Ծառայության քաղաքացիական ծառայության բարձրագույն, ինչպես նաև գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոններում, նշանակում և ազատում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և ստորաբաժանման մյուս աուդիտորներին»,

2) 48-րդ կետի դ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) է նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում Ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների 2-րդ, 3-րդ ենթախմբերի, առաջատար և կրտսեր պաշտոնների աշխատողներին, ինչպես նաև աշխատակազմի քաղաքացիական ծառայող չհամարվող աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր, բացառությամբ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և ստորաբաժանման մյուս աուդիտորներին»:

*/Նորմատիվ/*